

† ՄԱՅԳՈՅԺ

ՄԱՏԱԹԻԱ ԳԱՐԱԳԱԶԵԱՆ

Անցեալ նոյեմբերի 19 ին Կ. Պօլսում վախճանուել է Մատթիա Գարագաշեանը, որ ծանօթ է ռուսահայ բանասիրութեան իւր քառահատոր «Քննական հայոց պատմութիւն» երկով: Հանգուցեալի մասին հետեւեալ տեղեկութիւններն ենք քաղում «Բիւզանդիօնի» նոյ. 20 համարից. —

Գարագաշեանը բնիկ Բերացի էր հայ կաթողիկէ ծնողների զաւակ. սկզբում աշակերտեցաւ Վեննայի Միլիթ. վանքում, ուր ցոյց տուեց մտքի ընդունակութիւն. և ցանկալով ազատուել վանական կեանքի կապանքներից, թողեց քահանայութիւնը, վանքը և գնաց Պօլս: Գարագաշեանը մեծագոյն ջատագովն հանդիսացաւ Ոսկեդարու հայերէնի՝ Վինետիկի դպրոցի դէմ և այդ առթիւ հրատարակեց «Նկարագիր ուսմանց», Ռասինի «Հռակիքնեայ երգք վասն կրօնից» և «Առակք Լաֆօնտէնի», և «Ճաշակ ոսկեղէն դպրութիւն» տետրակների շարքը: Նորա հաւատն այնչափ մեծ էր գրաբարի վերայ, որ հաւատում էր, թէ հայերը կարող են թօթափել աշխարհաբարը և վերադառնալ նախնաց գրաբարի: Համամիտ չէր նոյն իսկ Այտընեանի եզրակացութիւններին և իւր այս կարծիքները պաշտպանեց մի շարք յօդուածներով 1881 ին «Թէրճէմանը էֆքեար» լրագրում:

Կ. Պօլիս դառնալուց յետոյ յարուելով կրօնական ազատամտութեան՝ թողեց կաթողիկոսութիւնը և հայ բողոքական հասարակութեան անդամ գրուեցաւ: Մտաւ Պայպլ Հասուգի (Աստուծաշնչական ընկ.) ծառայութեան մէջ

և իբրև քաջ հայագէտ, կատարեց նոցա տպած Ս. Գրքի արբազրութիւնը, հեղինակեց զանազան դասագրքեր և միսիօներական «Աւետարներ» շաբաթաթերթում թարգմանութիւններ եր անում գրաբարախառն այլանդակ լեզուով: Տպեց իր եռհատոր (ոչ, այլ քառահատոր) քննական պատմութիւնը, որի մէջ միայն հեռանդ եղաւ 25 տարի առաջ հրատարակած Լրոպական կարծիքներին մեր քերթողահօր մասին: Իւր իւրեւր Աւետարաններ, Հեղինակեց դիւրուսոյց քերականութիւններ գրաբարի համար: «Գարագաշեան գրաբարագէտ մէր, գրաբար մատենագիր, գրաբարի ուսուցիչ, բայց երբէք լեզուաբան մը (ֆիլոլոգ) չեղաւ... լեզուներու շարքին մէջ հայերէնին տեղը երբէք չճշտեց... չստուգեց հայերէնին աղերսն ասիական նախալեզուներուն հետ: Աստի յառաջ եկաւ իր թիւը կարծիքը գրաբարը վերականգնանցնելու կարելիութեան վրայ: Եւ ասով պիտի բացատրենք որ կրցաւ հաւատացող մը ըլլալ Հիւնքեարպէյէնտեան Տ. Յովհ. հօր «Ստուգաբանական բառարանին»:

Գարագաշեանը վախճանուեցաւ մօտ 90 տարեկան հասակում և նորա մարմինը յաջողեցաւ թաղել հայկաթողիկ կղերը՝ թաղելով նորան քահանայաթաղ կարգով... որպէս նախկին... Միթիթարեան միաբան՝ Հ. Անտոն վարդապետին: